ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Տնտեսական Զարգացման և Հետազոտությունների Կենտրոն

Հայաստանի Հանրապետության կառավարությունը

Կառավարությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանությունը. ՀՀ Սահմանադրության, միջազգային պայմանագրե-րի, օրենքների կամ ՀՀ Նախագահի նորմատիվ ակտերի հիման վրա այն ընդունում է որոշումներ և ապահովում դրանց կատարումը Հանրապետության ողջ տարածքում:

Կառավարության լիազորությունները սահմանվում են Սահմանադրությամբ և օրենքներով:

Կառավարության գործունեության հիմքերը

Կառավարությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է՝

- ՀՀ Սահմանադրությամբ
- ՀՀ օրենքներով
- ՀՀ Ազգային Ժողովի որոշումներով
- ՀՀ Նախագահի հրամանագրերով և կարգադրու-թյուններով
- Կառավարության և ՀՀ վարչապետի որոշումներով

Կառավարության գործառույթները

- Կազմում և Ազգային ժողովի հավանությանն է ներկայացնում Կառավարության ծրագիրը

Կառավարությունը, որպես իր գործողությունների պլանավորման շրջանակ, մշակում և ՀՀ Ազգային ժողով (ՀՀ օրենսդիր մարմին) է ներկայացնում Կառավարության ծրագիրը՝ հաշվի առնելով երկրի զարգացման ռազմավարական ծրագրերի դրույթները: Ծրագրում Կառավարությունը սահմանում է իր գործունեության գերակա ուղղությունները:

Հայաստանի Հանրապետության Կառավարության 2008-2012 ծրագիր

Ծրագրում սահմանվել են հետևյալ գերակայությունները՝

- Ազգային անվտանգության և ակտիվ տնտեսական քաղաքականության միջոցով կայուն զարգացման ապահովումը
- արդյունավետ պետական, տեղական ինքնակառավարման և մասնավոր հատվածի կառավարման համակարգի ձևավորումը և կորպորատիվ կառավարման մշակույթի արմատավորումը
- կրթության և գիտության զարգացումը
- տարածքային համաչափ զարգացումը
- ապահովել Հայաստանի քաղաքացիների սոցիալական պաշտպանվածությունը

Կառավարության գործառույթները (2)

- ԱԺ հաստատմանն է ներկայացնում պետական բյուջեի նախագիծը, ապահովում բյուջեի կատարումը, դրա վերաբերյալ ներկայացնում է հաշվետվություն

Կառավարությունը յուրաքանչյուր բյուջետային տարի իր գործունեությանը համապատասխան իրականացնում է՝

- ✓ բյուջեի նախագծի կազմում և ներկայացում ԱԺ հաստատման,
- ✓ բյուջեի կատարման ապահովում,
- ✓ բյուջեի կատարման հաշվետվության կազմում և ներկայացում ԱԺ հաստատման:

Կառավարության գործառույթները (3)

- ապահովում է Հանրապետության պաշտպանության, ազգային անվտանգության և արտաքին քաղաքակա-նության իրականացումը

Գործառույթն ապահովվում է համապատասխան գործադիր մարմինների միջոցով, օրինակ, Պաշտ-պանության նախարարության, Կառավարությանն առընթեր Ազգային անվտանգության ծառայության: Արտաքին քաղաքականությունը մշակվում և իրականացվում է Նախագահի հետ համատեղ:

Կառավարության գործառույթները (4)

- իրականացնում է պետական քաղաքականություն գիտության, կրթության, մշակույթի, առողջապա-հության, սոցիալական ապահովության և բնության պահպանության բնագավառներում

Գործառույթն ապահովվում է համապատասխան գործադիր մարմինների, օրինակ, Կրթության և գիտության, Մշակույթի, Առողջապահության, Բնապահպանության նախարարությունների, միջոցով:

Կառավարության գործառույթները (6)

- կառավարում է պետական սեփականությունը

Գործառույթի կատարումն ապահովում է Կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունը: Այն մշակում և իրականացնում է պետական գույքի կառավարման, մասնավորեցման և պետական մասնակցությամբ ընկերությունների լուծարման բնագավառում ՀՀ Կառավարության քաղաքականությունը:

Կառավարության գործառույթները (7)

- ապահովում է հասարակական կարգը, միջոցներ է ձեռնարկում օրինականության ամրապնդման, քաղաքացիների իրավունքների և ազատությունների ապահովման ուղղությամբ

Հասարակական կարգն ապահովվում է Կառավարությանն առընթեր ՀՀ Ոստիկանության միջոցով: Այն կոչված է հանցավոր և հակահիրավական այլ ոտնձգություններից պաշտպանել մարդու կյանքն ու առողջությունը, ինչպես նաև այլ իրավունքներն ու ազատությունները:

ՀՀ կառավարության կազմը

ՀՀ վարչապետ

նախարարներ

ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյան

Վարչապետի պաշտոնը ստանձնել է 2008 թվականի ապրիլի 9-ին

- Վարչապետը պետք է լինի Հայաստանի Հանրապետության քաղաքացի
- ՀՀ վարչապետը նշանակվում է Հանրապետության նախագահի կողմից Ազգային ժողովում պատգամավորական տեղերի բաշխման և պատգամավորական խմբակցությունների հետ խորհրդակցությունների հիման վրա
- Վարչապետը, ինչպես և Կառավարության այլ անդամ, *չի կարող*՝
  - զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ
  - զբաղեցնել իր պարտականությունների հետ չկապված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում կամ առևտրային կազմակերպություններում
  - կատարել վճարովի աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից
- որպես քաղաքական պաշտոն՝ փոփոխվում է քաղաքական ուժերի հարաբերակցության փոփոխության դեպքում

Քաղաքական պաշտոն

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով սահմանված կարգով ընտրովի կամ նշանակովի պաշտոն, որն զբաղեցնող պաշտոնատար անձը, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում, ընդունում է քաղաքական որոշումներ և համակարգում դրանց կատարումը, փոփոխվում է քաղաքական ուժերի հարաբերակցության փոփոխության դեպքում

ՀՀ օրենքը քաղաքացիական ծառայության մասին, հոդված 3.1մբ

Քաղաքական պաշտոններ են համարվում՝

- Հայաստանի Հանրապետության Նախագահի,
- Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորների, Հայաստանի Հանրապետության *վարչապետի*,
- Հայաստանի Հանրապետության *նախարարների*,
- Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների պաշտոնները

ՀՀ օրենքը քաղաքացիական ծառայության մասին, հոդված 3.2

ՀՀ վարչապետի գործառույթները

- վերահսկում է գործադիր իշխանության մարմինների գործունեությունը
- ստորագրում է ՀՀ միջազգային պայմանագրեր, տալիս է միջկառավարական պայմանագրեր ստորագրելու լիազորություն և հանձնարարականներ
- ընթացիկ հարցերի լուծման նպատակով ստեղծում է աշխատանքային խմբեր, հանձնաժողովներ
- ներկայացնում է Կառավարության անդամների թեկնածությունը Հանրապետության նախագահի հաստատմանը

ՀՀ վարչապետի գործառույթները (2)

- նշանակում և պաշտոնից ազատում է Կառավարությանն առընթեր պետական կառավարման մարմնի ղեկավարին և տեղակալին (որոշակի բացառությամբ*), նախարարի տեղակալին (որոշակի բացառությամբ**), Վարչապետի խորհրդականներին, մամուլի քարտուղարին, օգնականներին, ռեֆերենտներին, Կառավարության աշխատակազմի քաղաքացիական ծառայության բարձրագույն պաշտոններում նշանակվող անձանց
- սահմանված կարգով որոշում է պաշտոնական գործուղումների, ընդունելությունների հետ կապված հարցերը
- ներկայացնում է Կառավարությունը օտարերկրյա պետություններում և միջազգային կազմակերպություններում
- նշանակում է միջազգային և միջկառավարական մարմիններում ՀՀ կառավարության ներկայացուցիչներ

Հանրապետական գործադիր մարմիններ (ՀԳՄ)

- ՀՀ նախարարություններ
- Կառավարությանն առընթեր պետական կառավարման մարմիններ

Հանրապետական գործադիր մարմիններ (2)

- ՀԳՄ-ն իր գործունեությունն իրականացնում է ՀՀ օրենսդրությանը, ՀՀ միջազգային պայմանագրերին և իրավական ակտերին համապատասխան
- ՀԳՄ-ն ունի կանոնադրություն, զինանշանի պատկերով և իր անվանմամբ հայերեն և այլ լեզուներով կլոր կնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ
- ՀԳՄ-ի կանոնադրությունը և կառուցվածքը հաստատում է Կառավարությունը
- ՀԳՄ ղեկավարը գլխավորում է ՀԳՄ-ն, և կառավարում նրա համակարգի մեջ մտնող պետական մարմինների և կազմակերպությունների գործունեությունը
- ՀԳՄ-ի ղեկավարը պաշտոնի նշանակվում և պաշտոնից ազատվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և հաշվետու է ՀՀ Նախագահին, Կառավարությանը և Վարչապետին

Հանրապետական գործադիր մարմնի աշխատակազմը

ՀԳՄ-ի աշխատակազմը պետական կառավարչական հիմնարկ է, որն ապահովում է ՀԳՄ-ին օրենսդրությամբ վերապահված լիազորու-թյունների լիարժեք և արդյունավետ իրականացումը և քաղաքա-ցիական իրավահարաբերություններին նրա մասնակցությունը:

ՀԳՄ-ի աշխատակազմի կառուցվածքում ընդգրկվում են՝

- ✓ կառուցվածքային ստորաբաժանումներ (վարչություն, բաժին, քարտուղարություն)
- ✓ առանձնացված ստորաբաժանումներ (գործակալություն, տեսչություն)

Գործակալություն և տեսչություն

Գործակալությունը օրենքով, իսկ առանձին դեպքերում նաև օրենսդրությամբ նախատեսված ***ծառայությունների մատուցման*** գործառույթներ իրականացնող պետական մարմին է:

Տեսչությունը օրենքով, իսկ առանձին դեպքերում նաև օրենսդրությամբ նախատեսված ***վերահսկողական*** գործառույթներ իրականացնող և պատասխանատվության միջոցներ կիրառող պետական մարմին է:

Հայաստանի Հանրապետության նախարարություն

ՀՀ նախարարությունը իր համակարգի մեջ մտնող պետական մարմինների և կազմակերպությունների նկատմամբ վերադաս մարմին է:

Նախարարության համակարգը կազմված է՝

- նախարարից
- նախարարի տեղակալներից
- նախարարի խորհրդականներից
- մամուլի քարտուղարից
- օգնականներից և ռեֆերենտներից
- նախարարության աշխատակազմից
- աշատակազմի ղեկավարից
- տարածքային ստորաբաժանումներից
- նախարարության կառավարման ոլորտում գործող պեական մարմիններից
- նախարարության ենթակայությանը հանձնված պետական ոչ առևտրային կազմակերպություններից

ՀՀ նախարարները

- նշանակվում են Հանրապետության նախագահի կողմից վարչապետի առաջարկությամբ
- որպես քաղաքական պաշտոն՝ փոփոխվում են քաղաքական ուժերի հարաբերակցության փոփոխության դեպքում

ՀՀ նախարարությունները

Տարածքային կառավարման նախարարություն

Նախարար՝ ՀՀ փոխվարչապետ Արմեն Գևորգյան

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

Նախարար՝ Մխիթար Մնացականյան

Առողջապահության նախարարություն

Նախարար՝ Հարություն Քուշկյան

ՀՀ նախարարությունները (2)

Արդարադատության նախարարություն
Նախարար՝ Գևորգ Դանիելյան

Արտակարգ իրավիճակների նախարարություն
Նախարար՝ Արմեն Երիցյան

Արտաքին գործերի նախարարություն
Նախարար՝ Էդվարդ Նալբանդյան

ՀՀ նախարարությունները (3)

Բնապահպանության նախարարություն

Նախարար՝ Արամ Հարությունյան

Գյուղատնտեսության նախարարություն

Նախարար՝ Գերասիմ Ալավերդյան

Էկոնոմիկայի նախարարություն

Նախարար՝ Ներսես Երիցյան

ՀՀ նախարարությունները (4)

Էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն

Նախարար՝ Արմեն Մովսիսյան

Կրթության և գիտության նախարարություն

Նախարար՝ Արմեն Աշոտյան

Մշակույթի նախարարություն

Նախարար՝ Հասմիկ Պողոսյան

ՀՀ նախարարությունները (5)

Պաշտպանության նախարարություն

Նախարար՝ Սեյրան Օհանյան

Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն

Նախարար՝ Արթուր Պետրոսյան

Սփյուռքի նախարարություն

Նախարար՝ Հրանուշ Հակոբյան

ՀՀ նախարարությունները (6)

Տրանսպորտի և կապի նախարարություն

Նախարար՝ Մանուկ Վարդանյան

Քաղաքաշինության նախարարություն

Նախարար՝ Վարդան Վարդանյան

Ֆինանսների նախարարություն

Նախարար՝ Տիգրան Դավթյան

Կառավարությանն առընթեր մարմինները

- Ազգային անվտանգության ծառայություն
- Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե
- Հայաստանի Հանրապետության ոստիկանու-թյուն
- Միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտե
- Պետական գույքի կառավարման վարչություն
- Պետական եկամուտների կոմիտե
- Քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչու-թյուն

ՀՀ կառավարության աշխատակազմը

Կառավարության աշխատակազմն ապահովում է Կառավարությանը վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացումը, Կառավարության բնականոն գործունեությունը և քաղաքացիական իրավահարաբերություններին նրա մասնակցությունը:

Աշխատակազմի կառուցվածքը՝

- աշխատակազմի ղեկավար (ղեկավարում է աշխատակազմը)
- աշխատակազմի ղեկավարի խորհրդական
- աշխատակազմի ղեկավարի տեղակալներ
- աշխատակազմի ստորաբաժանումներ
- ՀՀ վարչապետի խորհրդականներ
- ՀՀ վարչապետի օգնականներ

ՀՀ կառավարության աշխատակազմը (2)

- Աշխատակազմն ապահովում է ՀՀ կառավարության և վարչապետի որոշումների ու հանձնարարականների կատարման վերահսկողությունը:
- Իրականացնում է Կառավարության քննարկմանը ներկայացված հարցերի նախապատրաստումը, այդ թվում՝ այդ հարցերի վերաբերյալ տալիս է եզրակացություններ, վերլուծական ու տեղեկատվական բնույթի նյութեր և առաջարկություններ:
- Կառավարության աշխատակազմի կանոնադրությունը և կառուցվածքը հաստատում է Կառավարությունը, աշխատողների թվաքանակը՝ Վարչապետը, իսկ Կառավարության աշխատակազմի հաստիքացուցակը՝ աշխատակազմի ղեկավարը:

Կառավարության գործունեության կազմակերպումը

Կառավարությունը յուրաքանչյուր տարվա համար, մինչև յուրաքանչյուր տարվա հունվարի 15-ը, մշակում և հաստատում է Կառավարության՝ տվյալ տարվա գործունեության միջոցառումների ծրագիրը՝ ըստ առանձին ուղղությունների: Ծրագիրը կազմվում է ըստ եռամսյակների:

Կառավարության հերթական նիստերը հրավիրվում են հինգշաբթի օրերին, դրանք հրավիրում և վարում է Վարչապետը: Նիստերի նախապատրաստման ամբողջ աշխատանքը, ինչպես նաև նիստերի անցկացումը, ապահովում է Կառավարության աշխատակազմը: Արտահերթ նիստերը հրավիրվում են ըստ անհրաժեշտության՝ ՀՀ Նախագահի կամ Վարչապետի նախաձեռնությամբ կամ կառավարության որոշմամբ:

Կառավարության քննարկմանը հարցեր ներկայացվում են ՀՀ Նախագահը, Վարչապետը, նախարարները: Ներկայացվում են միայն հիմնավորված, միմյանց չկրկնող և արդեն լուծում ստացած հարցերին սկզբունքորեն նոր լուծում տալու կամ նոր ընդունված օրենսդրության պահանջներին դրանց համապատասխանեցնելու նպատակ հետապնդող հարցեր:

ՀՀ կառավարության ծրագրերը

- Կառավարության ծրագիր
- Տարեկան միջոցառումների ծրագիր
- Պետական բյուջե
- Միջնաժամկետ ծախսերի ծրագրեր
- Կայուն զարգացման ծրագիր
- Հակակոռուպցիոն ռազմավարություն
- Հակաճգնաժամային միջոցառումներ

ՀԱՍՑԵ՝

Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, 0010, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն, 1

Ինտերնետային կայք՝ www.gov.am

www.gov.am